

րի գերիշխանութեան հնազանդելու մէջ, որ մարդապաշտութիւն է և աստուածամարտութիւն:

Ահա այսպիսի մեծ տարբերութիւն կայ հայ եկեղեցու և քաթոլիկ եկեղեցու հայեցուածքների ու ուղղութեան մէջ վերաբերութեամբ քրիստոնէական սուրբ եկեղեցու ընդհանրականութեան: Պապամոլները խախտում են Ա. եկեղեցու իսկական ընդհանրականութիւնն, երազելով հաստատելու այն պապի անձնաւորութեան մէջ, իբրև հաստատուն միմի վերայ: Իրաւ որ, ասենք Ա. Պօղոսի խօսքերով. Նոքա նանցացան ի խորհուրդու ի-ըեանց և խառարեցան անմոռունեամբ սիրու նացու ղանձնին առ իմաստունու ունեն՝ յիմարացան և փոխեցն դժուառանեղջին Աստուծոյ (այս գեպքում մի, սուրբ կաթողիկէ և առաքելական եկեղեցւոյ) ի նանսունիւն պատկերէ Եղծանելի ճարդու: . . . որ փոխանակեցն ոճշմարդունեն Աստուծոյ ընդ սրբունեան, հնապահութեան և պաշտեցն ուղարքածու և ու ուղարքէն, որ է օրինեալ յաւիրեանու, ամեն (Հառվ. Ա. 21, 22, 23, 25):

(Պեր. Վետ.)

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅԵՐԵՆ ԼԵԶՈՒԻ ԴԱՍՏԱՑՈՒՈՒԹԻՒՆ

Ծխական ասաւ-հայաններում:

Վեհափառ Հայրապետի հաստատած նոր ծրագրում ցոյց է տուած այն վերջնական արդիւնքը, որ ծխական ուսումնաբաններում հայերէն լեզուի դաստառուստ-լիւնից պահանջվումէ: Ուսուցիչը ինչ ճանապարհ էլ որ ընտրէ նոյն նպատակին դիմելու համար, բայց և այնպէս պէտք է գիտենայ, թէ իրանից նոխ և առաջ կը պահանջուի, որ նոյնքան արդիւնք ցոյց տայ: Այս տեղ պէտք է նկարագրուի դաստառութեան մի եղանակ,

որ բնական կերպով կարող է հասցնել այդ վախճանական կետին:

Նեղուն խիստ բազագրեալ ուսմունք է. նա ունի բազմաթիւ հանգամանքներ, իւրաքանչիւրը որոշ պաշտօնով. հետեւապէս նոցանիդ ոչ մէկի հմտութիւնը չը պէտք է պակասի, որպէս զի ամբողջի կատարելութիւնը անթերի կերպով ձեւանայ: Լեզուի ուսուցման գլխաւոր գժուարութիւնը նորանում է կոյանում, որ նորա հմտութիւնները միմեանցից այնպէս չեն բաժանվում, որպէս զի կորողանանք նոցանից մի քանիսը առաջին տարուայ ընթացքում աւանդել, միւսները՝ երկրորդ տարուայ ընթացքում, մնացածը՝ երրորդ, չորրորդ և հինգերորդ տարիների ընթացքում, այլ նոքա սերտ կապուած և զուգակցած հանգամանքներ գոլով՝ միշտ իրանց ամբողջութիւնը պիտի պահպանեն, միան թէ՝ իրանց յաջորդող տարբեր կատարելութեան աստիճաններով, այսինքն ամբողջութիւնը միշտ աւելի լրացնելով և հարցեալ ընդարձակելով: Այդ տեղ մանկավարժական արուեստը այնպիսի սկզբունքով պէտք է առաջնորդուի, որ ուսուցման ժամանակ խառնակութիւններ չառաջացնէ, իւրաքանչիւր անգամ նպատակի կէտը ճիշդ որոշէ, մի հանգամանք միւսի հետ չը շփոթէ, միշտ ուղիղ հետեւական յաջորդողութիւն պահպանէ, նախընթացը այնքան հաստատէ, որ անմիջապէս հետեւող մասի համար՝ անխախուած հիմք պատրաստէ, մի խօսքով ուսուցման բեղմնաւորութիւնը յուսայ՝ ճանկան հագեկան կարողանելով:

Մենք ունինք զանազան տեսակ ուսումնարաններ, և ամենայն տեղ հայերէնը պէտք է ուսուցանուի: Նոքա ուրեմն լեզուի ուսումնասիրութեան զանազան աստիճաններ են կազմում: այլ է միդասեան ուսումնարանը, այլ է՝ երկդասեան ուսումնարանը, և այլ է հոգեւոր գպրոցների շրջանը: Եթէ ուղինանք ճիշդ որոշում գնել գոցա մէջ, ամենալաւ սահմանը այս կը լինի. նախ՝ գրադիտութիւն և լեզուի սկզբունք առանց քերականութեան, Եվրոպ՝ քերականութեան հրահանգ, և Երրորդ՝ գրքի և գրի վարժ գործածութիւն, իբրև մի նոր գործիք ուսմանց յառաջադիմութիւնը ապահովեցնելու համար:

Սպաս այն առոտիճաններն են, որոնցից իւրաքանչյւրը որոշ նպատակով պէտք է առաջնորդուի և ամուր իւրիսի դառնայ հետեւալի համար, բայց այնպէս, որ ամենայն աստիճանում մանուկը լեզու ուսումնակիրէ մի քանի և գրեթէ մի և նոյն կողմերից։ Մանկան հոգին, բանականութիւնը, միոքը, որ անբաժան է, պէտք է միանգամայն զարգանայ այդ ամենայն կողմերից, նա պէտք է միշտ սովորէ հասկանալ (լսել) և խօսել, գրել և կարդալ, և ի հարկէ իւրաքանչիւր անգամ աւելի ընդարձակ և կատարելագոյն հմտութեան համելով, քան առաջ։

Արդ ի՞նչպէս գուրս գանք այս դժուարութիւններից, ի՞նչպէս լուծենք այս հակասական պահանջները. այն ի՞նչ տեսակ աստիճաններ են, ուր որ միշտ մի և նոյնը պիտի ուսուցանուի, ուր որ պէտք է այնպէս վարժեցնել, որ միշտ լսեն, և խօսեն, միշտ գրեն և կարդան. միթէ աստիճանների յառաջադիմութիւն է այս։—

Լսելը և խօսելը մարդու բնական ձիրքեր են, իսկ գրելը և կարդալը՝ նորա արտեստական հնարներ են, որովհետեւ նա երբեմն կարեւորութիւն է զգում գրով հաղորդել այն, ինչ որ կարող էր իւր բերանով խօսել, և կարդալ այն՝ ինչ որ կարող էր ուրիշի բերանից լսել։ Ուրեմն լեզուի ուսուցման խսկան հիմքն ու նիւթը՝ հասկանալն ու խօսելն է, կամ թէ՝ ոչինչ չպէտք է գրել տալ և կարդացնել տալ, որի մասին որ մանուկը տակաւին հասկացողութիւն չունի և չի խօսում։ Եւ թէ պէտ ամենայն աստիճաններում բանաւոր վարժութիւնները միշտ առաջ պէտք է լինին, քան համապատասխան գրութեան և ընթերցանութեան վարժութիւնները, բայց հասկանալի է, թէ այդ բոլոր տեսակ վարժութեանց նիւթն ու բովանդակութիւնը հասակի և աստիճանի հետ ի միասին միշտ աւելի բարդ և յօդուածոյ պէտք է լինի։ Ուրեմն աստիճանները իրարից զանազանվութ են մոտաւոր շրջանի ընդարձակութեամբ և համապատասխան վարժութեանց աւելի մանրամասն նրբութիւններով։

Մի երկրորդ կէտ, որ ի նկատի պէտք է առնուի, այդ այն է,

թէ ուսուցման գլխաւոր նպատակը այն պէտք է լինի, որ մանուկը սովորէ գրական մաքուր լեզուն հասկանալ և գործածել: Բայց լեզուի հասկացման տեսակները զանազան են, և այս զանազանութիւնները պէտք է լաւ ըմբռնուին, որպէս զի ուսուցումը սխալ ընթացք չը ստանայ: Լեզուն կարելի է գործնական ճանապարհով ուսունել, ինչպէս որ մանուկը տան մէջ սկսում է խօսել, բայց կարելի է պէտական կերպով եւս ձեռք բերել, այսինքն վերացուկան գաղափարներով, տրամարանական մուածութեամբ կամ կարճ ասելով՝ ֆերականութեան միջնորդութեամբ: Արդ տարրական միջասեան ուսումնորաանը չի կարող այս վերջին ընթացքը բռնել: Այլ նա պէտք է հոգայ աշակերտին այնպէս կենդանի մատակարարել լեզուն, որ սա չը գժուարանայ հասկանալ ամենայն ինչ, որ ինքը առիթ պիտի ունենայ իւր գործնական կեանքում լսելու և կարդալու:

Երբեմն այս կէտը շատ սխալ կերպով է ըմբռնվում: Թէպէտ ուսումնարանը իւր շատ հանգամանքներով և մանաւանդ խխտ ու կանոնաւոր կարգերով՝ մանկան համար այն չէ, ինչ որ նորա համար եղել է իւր ծնողական տունը, բայց մանկան լեզուի ազնուացումն ու ճոխացումը՝ ուսումնարանում ճիշդայնպէս պէտք է շարունակուի, ինչպէս որ սկզբնապէս տանը զարգացել է: Այսինքն անմիջապէս գործնական ընթացքով, առանց անդրագարձութեանց: Այն լեզուն, որ կամենում ենք նորան ուսուցանել, այսինքն մաքուր, կանոնաւոր, քաղցրավուր լեզուն, պէտք է անդադար հնչեցնենք նորա ականջում, այնպէս որ մեր լեզուն մի կենդանի խօսակցութիւն լինի նորա սրտի հետ, հետևապէս մեր խօսակցութեան առարկաները ևո՛ նորա ուշք ու միտքը գրաւող վայելուչ բաներ պէտք է լինին: Զօր օր, հազիւթէ մանուկը նպաստաւոր կարծիք կազմէ ուսումնարանի մասին, եթէ այն տեղ նորան պատմեն, թէ «կատուն չըրս ոտք ունի», «նորածին մանուկը կաթէ ուտում», «ամենայն մարդ մի քիթ ունի»: և այս կը պատահի ոչ թէ այն պատճառով, իբր թէ անպատեհ է աշխակերտի հետ խօսել այն նիւթերի մասին, որոնք որ նորա շրջահայեցողութեան են պատկանում, այլ որովհետեւ կան բաներ, որոնք նորան արդէն

քաջ յայտնի են. Նա արդեւ կլատացէլ է այդուհայ ժամանելուներուն։ Մանուկը ուսումնարանից բոլորովին այլ ակնկալիքներ ունի, ուր որ այնքան կարճ ժամանակում չի էլ կարողանայ շատ բան վառտակել։

Ճշմարիտ է, երբ որ մանուկը տան մէջ այնպէս արագ արագ յառաջադիմութիւններ է տնօւմ, այն տեղնա լսում է ոչ թէ իրան բոլորովին անծանօթ, օտար, բացակայ, հեռաւոր և հազուագիւտ իրերի մասին խօսակցութիւններ, այլ ինչ որ իւր անձին ընտել և մօտիկ է տարածութեամբ և ժամանակով, ինչ որ անմիջապէս իւր աչքի առջեւ պատկերանում է, վերջապէս ինչ որ իւր անձին է վերաբերում, ինչպէս որ ինքը իրականութեամբ է կամ՝ ինչ որ ինքը գործել պարտաւոր է։ Սակայն այս ամենը նորան գրաւում է միայն այն ժամանակ, երբ որ նա իւր ծանօթ հանգամաներները տեսնում է նոր լուսով, լուսաւորությունը Պէտք է նկատել մանաւանդ և այն, թէ լեզուի այսպիսի անմիջական ուսման ժամանակ՝ համբակը միշտ լսում է կատարեալ և ամբողջացած լեզու, ուրեմն նա լեզուի բնական կապերից լուծուած բառեր չի ստանում։ անջատուած և զատուած քերականական ձևեր չի լսում, և ոչ դիտաւորութիւն է նկատում իրա շրջապատողների մէջ, թէ նոքա ձգուում են իրան լեզու ուսուցանել գիտութեամբ և ծրագրով։ Նա ուսանում է ամենայն բան պատահմամբ, յարմար հանգամանկքներում, տեղնուտեղը։ Եւ ի՞նչպես է վերաբերվում ինքը մանուկը այս հրահանգին տան մէջ, ուր որ նա ոչինչ դպրոցական կանոններով կաշկանդուած չէ։ Մանուկը միշտ մի որ և է նոր էաղից հետաքրքրուած է, միշտ հետամուտ է հասկանալ այն լեզուն, որ ամենայն օր լսում է, որ անդադար իրա ականջին է հասնում, որով ամէնքը նորա հետ խօսում են։ Նա ամենայն ջանքով յարատեւութեամբ և ուշիմութեամբ խելամուտ է լինում իւր լսած բառերին և այն առարկաներին, որոնց որ վերաբերում են խօսածները. նկատում է այն հանգամաները, որոնց առթով որ արտասանուել են բառերը, այն գործովութիւնները՝ սրոնք որ բառերից տռաջ են կատարվում կամ անմիջապէս նոցա հետեւում են. դիտում է երեսի այն շար-

ժումները և դէմքի գծագրութիւնները, որով որ խօսողը արտասանում է բառեր, իսկ դիմացի լսողը՝ իմանում է խօսանը, Բայց թէ մանուկը այս փորձերի ժամանակ իւր լսածներից մեծագոյն մասը սկզբում ընաւ չի հասկանում, ապա մինը կամ միւսը միայն աշօտ զգացութեամբ է ըմբռնում, շատ բան երկար ժամանակ կիսառ է հասկանում և այլն, բնաւ զարմանալի չէ այս: Սակայն ինչ որ մի օր մժութեան մէջ մնայ, հետեւեալ օրը նորա վերայ կը տարածուի նոր լոյս, երրորդ օրը՝ կատարեալ պայծառութիւն. և ինչ որ մի տարի անլուծելի գաղտնիք մնայ, անշուշտ երկրորդ և երրորդ տարուայ ընթացքում կը յայտնուի քողի տակից: Նա եթէ մի քառ հարիւր անգամ էլ հասկացած ըլ լինի, մի անգամ վերջապէս կը լսէ այնպիսի կապակցութիւններով և գործադրութիւններով, որ այնուհետեւ նորա տարակոյսները բոլորովին կը փարատուին: Այսպէս նա սկսում է հասկանալ նախ միրձաւորագոյն հանգամանքները, այսպէս նա մի լոյս է ստանում աւելի հեռաւորները և հազուագիւտները ևս գէթ մասամբ ըմբռնել կարենալու, վերջապէս այսպէս նա իւր լսած լեզուին բաւական չափով տէր է գառնում: Մանուկը սովորում է ոչ միայն իւր շրջապատողների լեզուն նիւթապէս իմանալ, այլ և նոյն լեզուի միջնորդութեամբ՝ ըմբռնել նոցա հասկացողութիւնները. լեզուի մէջ այնպէս միացած են՝ իրը, գտղափարը և բաւը, որ գեռ երկար ժամանակ մանուկը չի կարողանում այդ երեքը իրարից զատել: —

Ահա այս է և ուսումնարանի ճանապարհը: Կենդանի բանապէ հազորդակցութիւն—որ պէտք է մատակարարէ անմիջական լեզուի հասկացողութիւն և մերձաւոր կեանքի շրջահայեցողութիւն. ահա այս է բոլոր շինութեան հիմնաքարը: Ուսումնարանը պէտք է բնութեան ճանապարհը ընտրէ, բայց այժմ աւելի գիտակցական, կարգաւորած և ծրագրած ուղղութեան ընթացք առնելով, քանի ինչ որ առաջ եղել էր տան մէջ: Այդ ժամանակ բովանդակութիւնն ու ձեզ, նիւթն ու համապատասխան լեզուն՝ տակաւին իրարից ըլ պէտք է բաժանուին: Ուսուցիչը խօսում է աշտկերտի հետ պատմում է, հարցնում

է, պատասխաններ է լսում, ուղղում է, նշանաւոր ասացուածները անձամբ արտասանելուց յետոյ՝ նոցա կրկնել է տալիս, և ամբողջը գարձեալ պատմել է տալիս գլխից և աւելի ճնիւ լեզուով: Բայց որովհետու ուսումնարանը չի կարող իրական կեանքը ցոյց տալ, ուստի ուր որ հարկն է՝ պատկերներ է ցոյց տալիս, գծագրում է և բանեցնում է լեզուի նկարագրական, փոխաբերական և այլարանական ձևեր: իսկ նախ և առաջ ուսուցչի լեզուն պէտք է բղինէ նորա սրտից և ոգուց և աշակերտների մէջ զարթեցնէ համակրութիւն իւր ուսուցանելիքների համար:

Այսպիսի անմիջական տպաւորութիւնների վերայ Ֆայն պէտք է հաստատուի և բուն լեզուաբանական կամ միջնորդական լեզուի ուսուցումը. և ահա որպանով է զանազանիում ուսումնարանը ընտանիքից: Լեզուն խորհրդածութեան աւարկայ շինել, նորանիշ կանոններ հանել, նորա գործածութիւնը աւելի և ճոխացնել զանազան անդրագարձութեանց միջնորդութեամբ – անշուշտ կարեռ և օգտակար գործ է. բայց այդ արդիւնքը այն ժամանակ միայն կերեւայ, երբ որ այդ վարժութիւնները իսկական հիմքից առնեն իրանց սկզբնաւորութիւնը, այսինքն բանառոր վարժութիւններից:

Եթէ կարիք չըզգացուէր գրութեան և ընթերցանութեան արուեստական հրահանգութիւններն ևս մատակարարելու, ուսումնարանը կարող էր այնքանով միայն շատանալ, ինչ որ վերը նկարագրուեցաւ: Վասն զի վենդանէ խօսքն է իսկական միջոց՝ լեզու և միոք հաղորդելու համար, ուրիմն տարակոյս չկայ, թէ բերանից բերան արդարեւ կարելի է կրթութեան հարստութիւն ձեռք բերել: Բայց որովհետեւ գրել և կարդալը պէտք է ուսուցանուի, որոնք որ քաղաքակրթութեան յատուկ կնիքն են կազմում, և որովհետեւ դոցա յաջողութիւնը բացէիբաց կախուած է անդրագարձութիւնից, ուստի և անմիջական լեզուի ուսուցման դասընթացին՝ պէոք է հետեւ գրութեան և ընթերցանութեան դասընթացը, ասում ենք հետեւէ, և ոչ թէ առաջ լինի նորանից կամ միշտ զուգընթաց գնայ նորա հետ:

Մհնք այժմ ցոյց կուտանիք, թէ այս նախաբանի համեմատ ի՞նչպէս պէտք է գասակարգուի լեզուի ուսուցումը ըստ բաժանմանց. բայց նիւթի ընդարձակութեան պատճառով՝ թող բաւական լինի սիայն առաջին գասարանի բաժանմանց նկարագրութիւնը:

Ա. Բ. և Գ. բաժանմունք էամ Առաջին դաստիարակութեան.

Առաջին տարուայ լեզուի ուսուցումը երկու գասորնթացք ունի: Այդ գասորնթացներից նախկինը, որ հարկաւ միայն բանաօր վարժութիւններից կազմուած պէտք է լինի, կարող է առ նուազն երկու ամիս տեսել, մինչեւ որ հնորաւոր գառնայ նորա հետ կցել և յաջորդ գասորնթացը՝ ուր որ բանաւոր վարժութեանց հետ կը միանան Գրունեան և ընթեցանունեան վաս. ժութիւնները ևս, բայց և ոյնպէս այնուհետեւ ևս միշտ բանաւորը դարձեալ մի քանի դաս առաջ տանելով, քան համապատասխան գրութիւնն ու ընթերցանութիւնը:

Արդ ի՞նչ պէտք է լինի այդ ԲԱՆԱԿՈՐ վարժութեանց նիւթը կամ որ մի և նոյն է՝ մեր ընթերցարանների բովանդակութիւնը: Այդպիսի նիւթը պատահական և հասարակ առարկայ չը պէտք է լինի, այլ խորհրդաւոր և վսեմ իմաստ պարունակող, հետեւապէս նախապատիւ պէտք է համարել ոչ թէ մերկ և նիւթական արտաքին աշխարհը, այլ բարսյական ներքին աշխարհը, որքան որ նոյնը արտաքին աշխարհի տպաւորութիւններով կենդանանաւում է: Այլ և այն նիւթը չը պէտք է լինի հատուկտոր, անկապ նախագասութիւնների կուտակութիւն, այլ սերտ միութիւն կազմող ամբողջութիւն, այսինքն մի կատարեալ պատմութիւն, և այնքան կենդանի և դիւրըմբունելի կերպով ձեւացրած, որ իւր բովանդակութիւնները գրաւէ մանկան ուշադրութիւնը, մանաւանդ քաջալերէ նորան իւր բերանը բանալու և լսածը վերստին պատմելու, և առհասարակ հետացնէ անմիջական ըմբռնումն ու հասկացողութիւնը: Պէտք է միշտ ի նկատի ունենալ, թէ լեզուն սոսկ բաւեր չը պէտք է սովորեցնէ, այլ մոքեր տայ և մոքեր ծնանէ: Լեզուի նիւթը բնական պէտք է լինի, այսինքն մանկան հսգւոյ արամագրու-

թեան և հակումների համեմատ, մի նիւթ՝ որ կարողանայ նորա զարգացումը առաջ մղել, ուղղել և յարատե պահպանել։ Աւելի այժմ քան երբ և իցե պէտք է լրջմուռթեամբ ընտրութիւն անենք, որ նիւթը ազգային հանձարի և ժողովրդեան մտածողութեան ծնունդ լինի, քանի որ մարդու զարգացումը նախ և առաջ իւր ազգի զարգացման արմատներից է ծագում։ Վերջապէս լեզուի նիւթը մի այնպիսի աշխարհ պիտի բանայ մանկան հոգու առջև, որ նա լինի մեր իրականից աւելի բարձր և վսեմ։

Թէպէտև նիւթի ընարութեան ժամանակ հաւատարիմ պէտք է մանակավարժական այն սկզբունքին, որ ասում է, թէ «մերձաւորից առ հեռաւորը», սակայն նախ այն պէտք է քաջ կշռել, թէ մանկան սիրտը ի՞նչ է համարում իւր համար մերձաւոր, և ի՞նչ՝ հեռաւոր։ Երկինք, արեգակ, աստղեր — ահա նորա մերձաւորը, իսկ եթէ ուղենանք հէնց առաջին օրուանից նորա խելքը սրել՝ զննել տալով սենեակը, աթոռները, վառարանը, կատուի ոտքերի որբանութիւնը, այսինքն նորա աչքը գարձնել տալով ամենահասարակ և առօրեայ հանգամնեցների վերայ, անշուշտ այդ հնարներով չեն արձակուինորա կաշկանդուած լեզուի կապերը։ Ուսումնարանում ամենայն բան սովորեցնել՝ ոչ կարեոր և ոչ հնարաւոր է։ մի մասը միշտ պէտք է թուղնել մանուկին, որը նա առանց ուրիշի օժանդակութեան կարօտ լինելու անդամ՝ արդէն ինքը անձամբ է ձեռք բերում։ Աւելի պէտք է աշխատել, որ նորա ուսանելիքը միշտ մէ նորունքներ՝ կամ առարկայի նկատմամբ կամ անուան և լեզուի նկատմամբ։ մանուկը միշտ սնունդ պէտք է սուանայ իւր հարցամիրութեան համար, նա պէտք է ապրէ իբրև մանուկ և վաղօրօք չուրանայ իւր անմեղ երեւակայական աշխարհից, միայն թէ այս վերջինը լինի պարզ, մաքուր և տղնիւ։

Ինքնին հասկանալի է, որ կրօնի և իրազննական գասերի նիւթը պէտք է համարուի դարձեալ իբրև լեզուի պաշարը հարսարացնող նիւթ և այդպէս էլ գործածուի (իրազննական դասերը՝ ծրագրով լեզուի դասերումն է հաշուած)։

Լեզուի անմիջական տպաւորութեան առաջին հետեանքը

այն պետք է լինի, որ նա սովորեցնէ խօսել. լսածը անմիջապէս այնպէս պէտք է ազդէ, որ լեզուն շարժուի, վարժապեսի պատմածը աշակերտի լեզուն պէտք է բանայ: Բայց այդ ժամանակ ոչ չափազանց կուտակումը կօգտէ, ոչ էլ ոսկէ կշեռքով ժամանակամիջնորդ մասնատրածը: Մի անկապ և անկենդան նախագահառութիւն երբէք ոգի չի տայ աշակերտին, որ նա այնուհետեւ ուղենայ և ջանայ նոյնը իւր բերանով ևս կրկնելու: Խսկեթէ մանուկներին պատմուի այնպիսի պատմութիւններ, որ նոցա ուշքը լարեն, միտքը գրաւեն, այն ևս եթէ պատմուի մի քանի անգամ, —իցէ թէ այն ժամանակ արձակուին նոցա լեզուի կապերը:

Ուսուցչի հոգար այն պէտք է լինի, որ աշակերտը արդէն այս ասուիճանում հետղիւթէ սովորէ և վարժուի խօսել հաղով, շնորհալ իւրագույն անդամները, ուահողանելով +երականական ֆլուունիւն, մայսուր և վայշլու արդառանունիւն: Աշակերտը սովորում է փոքրիկ ոտանաւորներ, առակաւոր ասացուածներ, նաև գրաբար նախադասութիւններ (կրօնից). Նա սովորում է թէ սրբազն պատմութիւններ (տօների բացատրութիւն) և թէ արտաքին գիտութիւններից մանր տեղեկութիւններ վերըստին պատմել՝ ուսուցչի աւանդելուց յետոյ, նախ մաս առ մաս, ապա և ամբողջութեամբ, բայց ու նէ մի բառ և մի նախադասունիւն լսելով և ապա անմտաբար թութակելով, այլ իմաստի ամբողջութեան ազդումը ստանալով: Հատ հատ աշակերտի խօսածներին պէտք է յաջորդէ խմբովին արտասանութիւնը: Բայց որպէս զի իմաստալից խօսուածքի ճանապարհը բացուի, որպէս զի խօսածը մի և նոյն ժամանակ ուղիղ արտասանութեամբ և որոշ հնչմամբ կատարուի, պէտք է լըզուէ յերբ հասակացունը յաջողեցնել. իսկ այս նպատակով պէտք է որ մի և նոյն նիւթը իւնին մատակարարուի, այսինքն յատուկ, առանձին և զատ վարժութիւններով. ուրեմն բովանդակութիւնը և արտայայտութեան ձեւ՝ իւրաքանչիւրը զատ վարժութիւններով պէտք է աւանդուի: Մանկան միտքը միշտ զգաստ պահելու համար՝ փոխանակ տալուուի, միտքայն, կցկտուր խօսքի՝ ամենալաւ հնար է մի արտասանութիւն—յօդաբաշխ և վայելուչ տրո-

Հութեամբ: Այդպիսի արտասանութիւնը՝ իւր գաշնակաւոր շափ ու կշռով զգացման վերայ ևս կազդէ: որ մանկան զօւարթութեան համար մեծ նշանակութիւն ունի:

Այս է առաջին գասլնթացի կարգը: Բայց ոչ միայն այսպանը: Ասքա մշայն բանաւոր վարժութիւններ են, որոնք նախապատճառապահութեան պէտք է լինին գրութիւն և լինթերցանութիւննը ուղացաներու համար: Բայց պէտք է հենց տարուայ սկզբից Ք սովոր նախապատճառապահութեան հիմք ևս դրուի, գուգընթաց միւս նախապատճառապահութեան: Այս է՝ մանուկները առանձին գասերով պէտք է սովորեն դառները յնացնել, որը ոչ թէ իսկական գրութիւն պիտի լինի, այլ ձեւագրութիւն կամ գծագրութիւն. Նոքա պէտք է սովորեն, թէ ինչպէս է ձեւանում: Ա, ա, պ կամ իւրաքանչիւր տառը, հարեանցի նոյա անունները ևս լսելով սէ, ռու, այս եալին և տպագրած շարժական տառերը տեսնելով: (Գտաւէտ է, որ իւրաքանչիւր տառ ձեւանայ ոչ թէ միանգամայն, այլ ամբողջութիւնը հետզհետէ աճնեցնելով իւր յաջորդող մասերից, նախ գծելով ոկզմնական մազոյին գիծ, սպա մազային գիծ և հասա գիծ, յետոյ մազային գիծ—հաստ գիծ—և գարձեալ մազային գիծ և այն մինչեւ որ տառը շարունակ լրանայ, և եթէ մազային գիծը կոչենք՝ 1+իսկ հաստ գիծը՝ 2, հետեւեալ տառերի գրութեան հաշիւր այսպէս կը ձեւանայ:

4-1, 12, 121, 1212, 12121.

—1, 12, 121.

5 -1, 12, 121, 1212, 12121, 121212, 1212121, և լու.):

Ահա ժամանակ է որ սկսուի յաջորդ գասլնթացը: Բայց նախկին գասլնթացը, որ բացառ ապէս բանաւոր վարժութիւններին էր նուիրած, այսուհետեւ ևս չի գագարում, այլ ոյժմ արուեստական լեզուի վարժութիւններն էլ հետը կցորդելով սկսվում է խօսել, գչել և կարդալու գասլնթացը:

Ե՞րբ պէտք է սկսուի այս յաջորդ գասլնթացը: Անօգուտ է բանաւոր իսօսքի վարժութեան վերայ անմիջապէս միացնել գրութիւնը, մինչեւ որ վերը նշանակած երկու կողմի նախապատճառապահութիւնները որոշ չափով հաստատութիւն չեն ստա-

ցել։ Այս հասահատութիւնը նորանով պէտք է երեայ, թէ աշակերտը արդէն կարողանում է ուսուցչի պարզ առողջանութեամբ ուղիղ ասածները՝ կրկնել մի և նոյն եղանակով, իւրականջը վարժեցրել է խօսքի հնյիւնները և ձայնի ուրուակները զանազանելու, և հասկացողութեամբ այնքան զօրացել է, որ սկսում է ուշադրութիւն գարձնել նախադասութեանց և բառերի յօդականց նշան վերայ։ Խնդիրն հասկանալի է, որ ուսման ամենայն աստիճաններում՝ մանուկը նախ պէտք է բովանդակութեան համար հետաքրքրութիւն որպէս զի յետայ ձեւի հետաքրքրութիւնն էլ զարթնի նորա մէջ։

Եեզուն մի բուռն և անզուսպ զօրութիւն է, որ ինքնին բզիսում է ի ներքուսոս, բայց ինչպէս Պաւզոս առաքեալը ասում է ։ Եւ ոգիք իսկ մարդարէից՝ մարդարէից հնազանգին։ Աշուկերտը ի մանկութիւնն պէտք է սովորէ իշխանութիւն սուանալու իւր լեզուի վերայ. ուսումը պէտք է նորան նպաստէ, որ նա սկսէ գիտակցութեամբ և ոչ յախուռն բանեցնել լեզուն, իսկ եթէ նա լաւ խօսելու վարժութիւն է ստանում, լեզուի գերութիւնից ազատվում և լեզուի տէր է դառնում, նա ուրեմն սկսում է լեզուն շարժել իւր կամքով իբրև մի արտաքին առարկայ, ուրեմն լեզուի շէնքը նորա գիտակցութեան դիմաց պատկերանում է իւր կազմուածի մնաերով, և նա սկսում է նոյնը այնուհետեւ անդադար զննել և քննել։ Այսինքն նա արդէն պէտք է կարողանայ իւր հարցասիրութեամբ լեզուն սւսումնասիրել, իւր մտաւոր աեսութեան առաջև նորա շէնքը պատկերացնել, դիտել, նորա կազմութեան յօդերը որոշել կամ յօդաբաշխել։ Ահա խօսքի այսպիսի յօդաբաշխութիւնը իսկական նախադասութաստութիւն է, որպէս զի այնուհետեւ խօսքը գրի անցուցանուի, մանաւանդեթէ միւս կողմից նշանների ձեւագրութեան նախապատրաստութիւնը ևս չի սկակասել, ինչպէս որ վերը պահանջուեցաւ։ Խօսքի բնական յօդերը ճանաչելու համար՝ բարդից իջնում ենք գէպի պարզը, Մի կատարեալ ասութիւն կազմուած է լինում մէկ կամ մի քանի նախադասութիւններից, ապա նույագաստութեան յօդերն են՝ բառերը, բառերի յօդերն են՝

վանկերը, իսկ վանկերի յօդերը՝ հնչիւնները։ Առ այժմ՝ մենք ի նկատի ունինք լսած և խօսած բառերը, և մեր նպատակն է, որ աշակերտին զգացնել և զանազանել տանք այն հնչիւնները, որոնցից որ կազմուած է իւր լսած և արտասանած բառը. և այս պիտի լինի այն արձագը, որ տեղից որ պիտի ծլի գրութեան վարժութիւնը։

Հնչիւնների յօդաբաշխութեան համար երկու ճանապարհ կայ, մեքենայական եղանակ և լեզուի հանգամանքների ներքին կազմութիւնը ցուցանող եղանակ։ Մի բառի կամ մի վանկի հնչիւնները զգալի կացուցանելու և զանազանեցնելու համար՝ նախ շեշտում ենք Յայնառը, ապա ուշադրութիւնը դարձնել ենք տալիս նախադաս և վերջադաս բաղաձայների վերայ. այս կը լինի երկրորդ տեսակի յօդաբաշխութիւն։ Այսպէս պէտք է վարուել այն պատճառով, որ ինչպէս յայտնի է՝ ամենայն բառ ոչ թէ հնչիւնների խառնուրդն, այլ յօդաւոր կազմակերպութիւն, ուր ձայնաւորը կենդրոն է, իսկ բաղաձայները նոցա սահմաններ են կազմում։ Այս տեսակ յօդաբաշխութեան մի օգուտն էլ այն է, որ բաղաձայները չեն արտասանուի բռնի կերպով կամ հակառակ իրանց բնութեան, այլ միշտ իրանց համապատասխան նախադաս կամ վերջադաս ձայնաւորի հետ ի միասին կցորդած։ Եթէ աշակերտը զոր օր. «նուշ» բառը լուծէ, հարկ չը կայ, որ հընդիւնները զատ զատ նշանակէ և անբնական կերպով բաժանէ անբաժանելին, այսինքն՝ նև... առանձին թլուատէ և լլա... առանձին շշնչէ, այլ վերոյդրեալ եղանակով այսպէս կը հեգէ՝ սո, սու, նու, կամ սո, նու, նուշ։ Այս եղանակով երկրաբառուները ևս չեն անջատուի. զոր օր. «մայր» բառը այսպէս կը լուծուի՝ այ, այր, մայր, կամ այ, մայ, մայր։

Հենց որ աշակերտը վարժութիւն ստանայ լեզուի մէջ բնական յօդերը ճշգիւ որոշելու, նա կը հասկանայ, թէ հնչող լեզուն կարելի է երեւելի և տեսանելի կացուցանել, այսինքն պայմանական նշաններով գրել, մինչեւ անդամ հարկաւորութիւն կը զգայ շուտով Ճեռնարկել այդ արուեստը։ Այս վախճանով օգտաւէտ է, որ մանուկը առաջին քայլափոխում իսկ

անմիջապէս չը դիմէ բարդ գրերի գործածութեան, այլ նախ սկսէ ուղիղ գծերով և կետերով՝ նշանակել բառեր, ամբողջ նախադասութիւններ ու բարդ տասցուածներ։ Ե-դարձ եկանակը այս է։ ամբողջ խօսքը բաժանվում է նախադասութիւնների, որոնցից իւրաքանչիւրը մի գծի գրոշմամբ է յայտնվում, այնուհետեւ նախադասութիւնը բաշխվում է բառերի և իւրաքանչիւր բառ մի փոքրիկ գծիկով է նշանակվում։ վերջապէս իւրաքանչիւր բառի վանկերն էլ գծիկներով ու նոցտ մասերով (աղեղներով) նշանացի արտայայտվում են։ մինչև իսկ հնշիւնների փոխանակ կարելի է կէտեր դնել։ Զոր օր.

Ու անցէն լոր և առընդ ու վահակ ան պահ.

Գծեր, գծիկներ, աղեղներ և կէտեր նշանակելու նպատակն
այն է, որ աշակերտը դիւրութեամք ըմբռնէ այս մէջ գործը
— յօդաբաշխութիւնը. ապա թէ ոչ, եթէ ուղղակի պատելն
սկսենք գործածել, աշակերտի միտքը ելիս տարքեր կողմերում
կզրադուի, ուր մէկի պատճառով միւս գործը կը շփոթուի:
Քանի որ տառերի ձեւագրութիւնը տակաւին չի վերջացած և չի
հաստատուած, գործը առաջ պէտք է տարուի գծերով և կէ-
տերով, իսկ երբ որ այն ձեւագրութիւնն էլ բաւական յա-
ջողուի, այնուհետեւ կարելի է սկսել և բուն գրա-նիւել (աշ-
խատելու է, որ նոր տարուց առաջ սկսուի):

ԳՐՈՒԹԻՒՆԸ ՀԵՆց ՍԿՂԲԻՑ այնպէս պէտք է ուսուցանուի,
որ մանուկը սովորէ իւր բանաւոր խօսքը ԳՐԱՆՑ ԱՇԽԱԴ ԴՐՈ-

մել, գիրը իբրև խօսքի սպասաւոր նկատելով, Այսպիսի գիրը, որ յղացած միոքը ճշդիւ և անշփոթ կերպով գրի է առնում։ մինք կը կոչենք այսնացումն, որով միայն այն պէտք է հասկացուի, թէ ներքին միտքը պէտք է նշանագրերի միջնորդութեամբ երեւելի կացուցանուի լիակատար և անթերի կերպով, այնպէս որ աչքը կարողանայ ճանաչել մոքի բալոր զօրութիւնը։ Եռւտով կը տեսնենք, որ գրագիտութեան արձանացման շնորհիւ միայն՝ օգտաւէտ վարժութիւններ կարող են դառնալ արդադրութեան և նելադրութեան վարժութիւնները, որտեղ որ մեծ մասով ուսումնարաններում միայն զուր ժամավաճառութիւն են դառնում։

Նախ և առաջ չը մուտանանք, թէ ինչ որ աշակերտը խօսում է, այն ևս սովորում է գրել, և ինչ որ գրում է, այն ևս անմիջապէս հայտնած է, հետեւապէս գրութեան վարժութիւնների ժամանակ՝ նա ինքը կազմում է իւր գրելու և հայտնալու այրենարանը։

Ինչ կարիք լցուցանելու համար որ ստեղծուել է գիրը, հենց սկզբից ըստ այնո՞ւ ևս պէտք է նկատուի գրութեան ուսումը, և ինչպէս որ սլատմական ընթացքով ձեւացել է հայոց ուղղագրութիւնը, նորա համեմատ և՝ առաջին քայլերից սկսած՝ գրութեան ուսումը պէտք է միշտ աւելի հաստատութիւն ստանայ։ (Նորագոյն գրականական վէճը ուղղագրութեան մասին՝ ուսումնարանի մէջ մուտք չը պէտք է գործէ։ ուրեմն թէ ուսուցիչը դասերի ժամանակ և թէ ձեւնարկը ընթերցարանները՝ պէտք է զգուշանան քմահանոյ նորամուծութիւններից)։

Հայոց գիրը ոչ թէ պատկերագրութիւն կամ նկարագրում գրչութիւն է, այլ հնչիւնների նշան։ Ս. Մերոբը իւր մեծ գործը երեխ այն ժամանակ, միայն կատարելագործուած համարեց, երբ որ հայոց լիզուի բառերին ըստ ամենայնի խնամով միտ դնելուց յետոյ՝ հասկացաւ լիզուի յատուկ բոլոր ձայները և կարգեց իւրաքանչիւր լսելի ձայնի համար մի մի նշանագիր, և ուրեմն երբ որ տեսաւ որ այդ նշաններով կարսզմանսւմ է իւրաքանչիւր բառ կատարեալ կերպով ձեւացնել, երեւելի կա-

յուղանել կամ գրել: Բայց այդ նշանները ձայների պատկերներ չեն, այլ կամայտկան պայմանական գծեր, թէպէտ և այնքան հաստատուն են, որ իւրաքանչիւր ձայն իւր սեպհական նշան է: ստացել: Սկզբներում մեր այրութենը մեծ կատարելութիւն պիտի ունենար, այնպէս որ այն ժամանակ գրութեան համար միայն մի կանոն կարող էր լինել Գևիտ ինչեւ ոչ ունալում ես: Խոկ ժամանակով ձայների արտասանութիւնը փոփախութիւններ է կրել այժմ մենք մի ձայնի համար մէկից աւելի նշաններ ունինք, կամ զանազան ձայների համար՝ մի և նոյն նշան ենք գործ գնում: Այսպէս բացվում է սխալների դուռը, ուր համբակները կարող են շփոթել յ և հ, օ և ս, է և է գրերը մի և նոյն ձայն նշանակելիս, կոմ տարրեր ձայների համար կը պարտաւորին մի նշան գործ գնել, զոր օր, ս, ս, յ նշանները, որոնք մերթ ձայնուոր կամ կիսաձայն են և մերթ բազաձայն. նմանապէս մի քանի բաղաձայների բանց սեպհական նշաններով չեն գրվում, զոր օր աղջիկ, եղինակ, մէջ, մորդ, կարծ, ուր որ ՞, ՞, ՞, ՞, ՞ գրերը հնչվում են որպէս խ, չ, պ, թ, ի: Այսու ամենայնիւ հայոց գրութիւնը ինչպէս Ս. Մեսրոպի ժամանակ՝ այսօր ևս յայնական սկզբան վերայ հիմնուած գրութիւն է. դորա իսկական սգին այդ է: Բայց որովհետեւ ժամանակով մուտք գործած վոփսիսութիւնները այլ ևս ձայնով չեն ճշգվում, ուստի և մեր այժմեան ուղղագրութիւնը լոկ միայն ուղիղ արտասանութեամբ չի առաջնորդուի, այլ արտասանութեանը օգնական պէտք է գտունայ Քելականս-Եւան սկզբանուց, որ աւելի աչքին նշաների կարող է դառնալ, քան ականջին՝ լսելի:

Արդ եթէ ուղղագրութիւնը սոսկ ձայնական արտասանութեամբ չի առաջնորդվում և կանոնաւոր քերտականութիւն ուսուցանելն էլ գեւ ևս վաղ է, մանուկը պէտք է Գործնական կրթութիւններով գաղափար ստանայ լեզուի շենքի մասին: Զոր օր, վեց բառը արտասանվում է որպէս վեց սակայն երկրորդ բառի գրութեամբ մեջ իսկոյն հասկանում ենք, թէ դա Քայլ բառի մի նոր ձեւակերպութիւն է: Անոյ և անոյ ձայները իրեւ ձայն՝ մի և նոյն են, բայց աչքով մենք համոզվում ենք,

թէ նոքա տարբեր նշանակութիւն ունին. մէկը « Անի », բառից
է ծագում՝ մհւար՝ « անիւ » բառից: Ականջը ոչինչ խորսու-
թիւն չի գնում « և ով ընթերցանութեան համար, բայց
մեր լեզուն բնաւ չի ներում երկրորդ ձեւի գրութիւնը:

Ապա լեզուն ցուցանում է այնպիսի առանձնութիւններ,
որ մանկանց համար պատմական սուրբ աւանդութիւններ
պէտք է լինին, որոնց քերականական բացատրութիւնները կամ
անկարելի է այդ հասակում տալ կամ բնաւ չը կամ: Մենք
միակերպ անխտիր արտասանում ենք՝ նուէր, նաև, նուու, բայց
երեք զանազան նշաններ ենք գնում մի և նոյն ձայնի համար
(ու, ւ, վ): Այսպիսի գէպքերում սովորութիւն պէտք է
դառնայ, որ մանուկը նախ քան գրելու՝ կանխաւ տեղեկանայ,
թէ իւրոքանչիւր բառի առանդական ձեւը ո՞րն է, կամ վարժա-
պետից հարցնելով և կամ գրքի մէջ նայելով: — Նա պէտք է
իմանայ նմանապէս, թէ մենք երբեմն բառերի մէջ աւելորդ
գիր ենք գործածում (արքայ, մարդոյ) երբեմն որոշ նշանա-
կութիւն ենք տալիս նոյն դրին (լոյս, այն) երբեմն գիրը զեղ-
ջում ենք (գրել, մնալ—գըրել, մնալ):

Աշակերտի ձեռքքը պէտք է սովորէ այնպէս անսխալ գրել նորա
չօտածն ու լսածը, որ ուրիշի աչքն էլ անշփոթ կարթայ ճիշդ
նոյնը, ինչ որ նա ուզեցել է արտայայտել. հետեւապէս իւր
աչքն էլ պէտք է սովորէ ճիշդ այնպէս կարդալ, ինչպէս որ
զրի զօրութիւնն է, այսինքն որ նա Տայր բառը չը հեգէ մ, ա,
յ, ը և չը կարդալ Տահը, կամ չը փորձէ Լարդ բառի մէջ սոսկ
հնչիւններ գտնելու վ, ա, ր, ՛ և վերջին հնչիւնը կոշտ չար-
տասանէ՝ վարդ, փոխանակ կակուզ կարդալու՝ վարն, իսկ
գրութեան համար այսպէս հաստատուն հիմք գնելու համար
բառականն չէ: որ աշակերտը սուրբ լսողութեամբ ըմբռնէ իւր
ուսուցչի արտասանածը և ինքն էլ գեղեցիկ առօգաննութեամբ
նմանէ նորան, բաւական չէ այն կանոնը, թէ գրիր, ինչպէս
որ գուշ հնչում են: այլ հարկաւոր է հէնց սկզբից հասկացնել
նորան եւ միւս երկու կանոնները՝ ա) գրիր բառակազմութեան
համեմատ և բ) հաւատարիմ մնացիր աւանդութեան: Ուրեմն
ինչպէս որ առաջ յիշատակեցինք, բանաւոր վարժ ութեակց ժա-

մտնակ պէտք է յարմար դէպքերում գլաւոր լզուի ծանօթութիւններ աւանդել գործնական կրթութիւններով, պէտք է ուրեմն հաւանական սխալների առաջը առնել:

Լեզուի՝ ուրեմն և գրաւոր լեզուի՝ գլխաւոր մտոն է կազմում բառերի ծանօթութիւնը, որոնց թիւը անսահման է: Անթիւ բառերի ծանօթութիւնը չի կարող գրութեան ուսուման նպատակ լինել. բայց բառերը ունին ընդհանուր ձևեր և կազմվում են յատուկ եղանակներով. ահա այդ տեղեկութիւնը պէտք է մատակարարուի: Զոր օր. մեր բառերի մէջ հընդուղուած ա ձայնը, գրվում է զանազան կերպով—կամ ա ձայնաւոր նշանով կամ այ երկբարբառ գրով: Ով օր այս հանգամանքը գիտէ, նա ուրեմն գրաւոր լեզուի ծանօթութիւն ունի: Բայց եթէ հարկաւոր լինի մի անծանօթ բառ գրել, այդքան ծանօթութիւնը չի օգնի, որովհետեւ գետ ևս չը գիտենք թէ այն երկու տեսակ գրութիւններից ո՞րը ուղիղ կը լինի առաջիկոյ դէպքում: Մնումէ ուրեմն մի մեծ աշխատութիւն յանձն առնել, այն է այնպիսի բառերի ահագին աղիւսակ կազմել, որոնք որ գրվում են ա ձայնաւորով, իւրաքանչիւրը առանձին ուսուցանել և նոցա անծայր շարքը յիշողութեան մէջ տպաւորել. նոյնպէս մի երկրորդ աղիւսակ ևս կազմել, ուր կը մտնեն այ երկբարբառով կազմուած բառերը. բայց այս կը լինի անօգուտ և սխալ ընթացք: Բաւական է, եթէ սկզբում աշակերտը մի քանի ծանօթ բառերի օրինակով սովորէ ա հնչիւնի զանազան գրութիւնը, իսկ ժամանակին և ուսուման շարունակութեան թուղնէ, որ հետզհետէ բազմացնէ այդպիսի բառերի պաշարը: Ոչ նուազ սխալ կը լինի և այն կարծիքը, իբր թէ յիշեալ ծանօթութիւնը ոչինչ գործնական նշանակութիւն չունի այն պատճառով, որ նա անծանօթ բառի ուղղագրութեան տարակոյսը չի լուծում: Մինչդեռ նորա օգուտը մեծ է. այն օրուանից, երբ որ աշակերտը նոյն ծանօթութիւնը սուացել է, նորա մէջ արթնել է մի զգացում, մի հմտութիւն, որը որ առաջ չը կար, այն է այնուհետեւ նա սկսում է միշտ մտագրութեամբ զննել և տպաւորել ամենայն ա ձայնի գրութիւնը: Նա գիտէ, թէ որոս գրութեան մէջ տարբերութիւններ կան, ուստի կըզ-

գուշանայ և կաշխատէ հարկաւոր գիտելիքներ սառնապու, որսլէս զի սխալներից զերծ մնայ:

Այսպիսի ծանօթութիւններ կարելի է քաղել քերականութեան բոլոր մասերից և ուղղագրութիւնը միշտ կը դիմանայ քերականական կազմութեան, ածանցմտնց և սուսպիրանութեան մտադիր լինելով, բայց վարժութեան գլխաւոր նպատակն այն է, որ աշակերտը սովորէ մոտադրութեամբ գրի տունել կամ աշխանացուցանել: Ուստի և քերականութեան մեծ սրացարից պէտք է ընտրուի ամենաէականը, որ և այս ահղ ցոյց կուտանք մի քանի խորագիրներով.

Զայնական գրութիւնը հարկաւ յայնելի ժանօնսունիւնից պէտք է բղիսի: Զանազան բառեր հետզհետու լուծելուց յետոյ, վերջապէս յայտնի պէտք է դառնան բոլոր ձայնաւորներն ու բազաձայները: Բայց աշակերտըները բաղաձայներ պէտք է գտնեն ոչ թէ ատրօրինակ ձայներ բքչելով, մմնչելով, շշնջելով կամ սուլելով, այլ որպէս բառի համապատասխան ձայնաւորներին կըցուած նախագաս և վերջադաս հնչիւններ: Ուստի և վանկի հեգելը պէտք է սկսեն ձայնաւորից, որը վանկի կամ՝ բառի ոգին է: Նոքա պէտք է իրանց ականջով և զգացմամբ շ ձանաչեն իբրև կիսաձայն և սուզ, իսկ միւս ձայնաւորները՝ որպէս լիակատար հնչիւններ: «» թէպէտ գրութեամբ երկբարբառ՝ սակայն հնչմամբ կատարեալ ձայնաւոր է. այ, ի-, այ և միւսները իբրև մի ձայն պէտք է ճանաչեն, բայց երկբարբառ թէ հնչմամբ և թէ գրութեամբ: Բաղաձայներին գալով՝ իւրաքանչիւր հնչիւն գրեթէ իւր յատուկ գիր ունի, բայց և այնպէս շատ անգամ թաւ հնչածը (թ, չ...) գրվում է միջակ գրով (չ, ջ...), կամ նուրբ հնչածը (պ, ծ...)՝ դարձեալ միջակ գրով (թ, ձ...):

Հնչիւնները լուծելով աշակերտը աւելի սովորում է հարկանալ միավանկ բառերի ձայնական շէնքը: բազմավանկ բառերի շէնքն էլ պէտք է լուսաբանուի բառակաղմունեան միջնորդութեամբ: Աշակերտը մի բառ գրելիս՝ աւելի ուշագրութիւն պէտք է դարձնէ նօրա աշմագական մասի վերայ, իսկ յաճախակի գործածուող տննշան մասնիկները, ածանցները, նախադաս և

վերջագագաս վանկերը, հողավական և խոնարհման հանգերը, վերծառություն կորուսման և փոփոխման հանգամանքները, որոնց միջնորդութեամբ որ կազմվում են բազմաթիւ նորանոր բառեր, — արդէն վաղուց պէտք է յայտնի լինին նորան՝ զանազան ասիւծակներից և կանոնաւսր վարժութիւններից. զոր օր. անգիրանին բառը գրելիս՝ նա ամենելին չը պէտք է դժուարանայ ան և ունի-ն գրել, որովհետեւ ուրիշ անգամ էլ նոյնը շատ անգամ է գրել, այլ իւր մտադրութիւնը պէտք է գրաւէ գիր արմատական վանկը, անգիր բառը գրելիս՝ գարձեալ աւելի գիր արմատով պիտի զբաղուի, իմանալով որ է ձայնաւորը տռաջուայ է—ի փափոխութիւնն է, իսկ գարն բառը՝ ոչ թէ նոյն արմատից է ծագում, այլ գիր բառից կորուսմամբ և իւ ածանցով է կազմուել: Այս ամէնը ի հարկէ յարմար ժամանակներում աւելի օրինակներով և աչքով (նկարած աղիւսակներով) պէտք է ուսուցանել, քան կանոններով և իրար ետեից կուտակելով: Ահա նոյն աղիւսակների մտաւոր օրինակները.

անգոյշ	գրութիւն	գիտուն]- (ր) գլու	գիւտ
անառուն	մեծութիւն	գիտութիւն		գտիչ
անզաւակ	հաստութիւն			
ան ութիւն			
ան—գիւտ—ունին			սիրելի (մարդա)սիրութիւն	սկը

սպառսպուռ (սպառ-սպառ)
աղջամուզ (աղջ-մաղջ)

Քանի որ աշակերաը մկասւմ է աւաջ գնալ գրութեան արուեստի մէջ մի բառ միւսի հետ համաձայնեցնելով, մինչեւ որ նախալաւառութիւններ ևս կազմել է տովորում, նա գաղափար է կալվում մի քանի տեսակ բաւերի վերջահանգ վանկերի փոփոխութեանց մասին: Բայց նա այդ տեղեկութիւնը պէտք է ստանայ ոչ թէ հոլովների և խոնաշնորհների տախտակներից, այլ պէտք է սկսէ այդպիսի փոփոխութեանց մինը զանազանել և որաշել միւսից՝ իրանց գործադրութեան ժամանակ, և գրել մինը միւսի նման: Դրութեան ուսումը չը պէտք է ուսուցանէ հոլովներն ու խոնարհելը: Բանաւոր վարժութեանց ժամանակ

աշակերտը պէտք է զգայ այդ ձեւիրի կանոնաւոր և ճահաւոր գործածութիւնը և այնուհետեւ ստվորութիւն անէ գրել նմանը նման կը դում:

Բայց աշակերտը աւելի տռաջ պէտք է գնայ և ծանօթանայ նախադասութիւննեան և յօդութայ յներէ հէտ, որովհետեւ միշտ գրութեան ուսումը համարպատախան բանաւոր լեզուի համեմատ պէտք է առաջադիմութիւն անէ: Հարկ չը կայ երկար խօսել, թէ նախադասութիւն գրելիս ևս՝ բառակազմութեան մասին ստացած առաջուայ ծանօթութիւնները ամենայն քայլափոխում պէտք կուգան:

Իւրաքանչիւր առանձին նախադասութիւն և նախադասութեանց կապակցութիւն՝ աշակերտը պէտք է ըմբռնէ իրրե մի անխղելի միութիւն: Երբ որ սովորում է հարկաւոր տեղը չւ պէլ և հարկաւոր տեղը աւելի կամ պակաս տեսողութեամբ դաշտայ առնել, որով հետզհետէ կը վերանայ համբակի ձանձրալի միաձայն արտաօնութիւնը և անտեղի կերպով ընդհատող արտաքերութիւնը, անշուշտ կազնուանայ նորա լեզուն և նա կը մբռնէ ներքին սերու միութիւնը: Այդպիսի արտաօնութեան միջնորդութեամբ զգալի պէտք է կացուցանել գրութեան այն արտեստական հնարյաների կարեորութիւնը, որ մենք չէրադրութիւններ ենք կոչում: Այս վախճանով, գրութեան վարժութիւնների ժամանակ հարկաւոր է զանազան կարգի և տեսակի նախադասութիւններ գործածել, իրրե օրինակներ, որոնց նմանութեամբ որ այնուհետեւ միւսները պէտք է լափուին և կշռուին: Զոր օր: պէտք է որոշել՝ Ու մայն — այլ և — նախադասութիւնը. Թէ այսու — սակայն — նախադասութիւնը. Ենէ — հաղա — նախադասութիւնը և այլն:

Առողջանութեան մի հանգամանքը ևս այնէ, որ նախընթաց բարի (կամ վանկի) վերջին բաղաձայնը՝ արդասանութիւննեան ժամանակ միացնում ենք հետեւեալ բառի նախադաս ձայնաւորի հետ (որ նոր, եղբայր նուասաց, մէկի ցաւելի): Իսկ գրադասութեամանակ՝ բառի ամբողջութիւնը անարատ պահպանում ենք (որն որ, եղբայրն ասաց, մէկից աւելի): Եւ ընդհակառակ արտասանութեամբ անբաժանը՝ գրութեամբ բաժանում ենք բա-

ռակազմութեան համեմատ. մենք արտասահում ենք՝ գնում, գնում, գնում, կամ, կը հնէ, լունիմ, բայց գրամ ենք բաժանած՝ գնում եմ, գնում ես, գնում է, կ'ասէ, կ'օրհնէ, չ'ունիմ։ Սովորութիւն է նմանապէս շատ անդամ զեղջել ը կիսաձայնի գրութիւնը. մենք չենք գրում գորիչ, տըրտմել, շընիկ։—

Մի անդամ էլ կրկնում ենք, թէ ինչ որ աշակերտը գրումէ, այն ևս նա պէտք է տեսնէ լարձական տպագրած տառերով, որպէս զի յետոյ տպագրած գրքի ընթերցանութիւնը նորան ոչինչ գրութիւն չը պատճառէ. այս պէտք է համարուի հասարակ կանոն։

Առաջին տարուայ գրութեան վարժութեանց մէջ կը մտնին՝ հատ հատ բառերի, միացած բառերի (ածականով գոյական, յատկացուցչով յատկացեալ . . .) և կարճ նախադասութեանց գրութիւն։ Լեզուի այն ընդարձակ պաշարը ի հարկէ այս տեղ չի սպառուի, այլ չափաւոր օրինակներով կարելի կը լինի միայն հէծու հասպատճել, թողնելով որ միւս տարիների ուսումը հօգայ հիմքի շարունակութիւնը։ Առաջին տարուայ նպատակն է փոքր աշակերտներին այնքան հմտութիւն տալ, որ ուսուցչի արտասանած մէջ մի պարզ նախադասութիւնը՝ այն ևս զգալի առոգանութեամբ և գեղեցիկ տրոհութեամբ բազմիցս արտասանածը՝ լաւ ըմբռնելուց և ուղիղ ու անսխալ կրկնելուց յետոյ, նոքա կարողանան գրի առնուլ կամ արձանացուցանել այնքան վարժութեամբ, որ միամեայ ուսման արդիւնքը երեւայ։ Խոկ Երևուշ տարուայ պտուղը այն պէտք է լինի, որ ոչ թէ մի նախադասութիւն, այլ մի կարճ հատուած կամ աւելի երկայն հատուածի մի կտոր՝ բաւական վարժ կերպով գրելու կարողութիւն ստանան աշակերտները։

Ի՞նչ պէտք է գրուի առաջին տարուայ ընթացքում։

Արդէն բաւական յայտնի է, թէ գրութիւնը պէտք է ամուր հիմնուի լսածի և խօսածի վերայ. ինչ որ աշակերտը ուսունում հասկանում, բանաւոր արտայայտում է, այն պէտք է գրէ։ Գրութեան նիւթը պէտք է քաղուի բոլոր տեսակ ուսմանց նիւթերից. միշտ պէտք է գրուի յայտնի և ծանօթ եղածը։ Այս սկզբունքը ամենայն ճշգութեամբ պիտի գործադրուի,

բայց սիրալ ընթացք չը ստանայ: Նախ և առաջ հարկաւոր է բնաւ յր շփոթել առարկաների դասը՝ լեզուի դասի հետ. երկուսը սերտ կապուած պիտի լինին և զուգընթաց գնան, բայց իւրաքանչիւրի բնութիւնը անաղարտ պահպանելով: Առարկայի ծանօթութեան համար շատ բառեր մի ներքին միութիւն են կազմում, որոնց մասին որ գուցէ աշակերտները ևս շատ կամ քիչ ուսացար ունենան խօսելու, զոր օր. մի այդպիսի կոպակցութիւն կայ. հետեւալ բառերի մէջ՝ ծառ, արմատ, բուն, ճիւղեր, ստեր, տերեւ, ծաղիկ, պտուղ, սաղարթ: Իրեւ առաջ կայ՝ այս միութիւնը շատ ընտիր է. իրեւ լեզու՝ ոչինչ նշանակութիւն չունի, որովհետեւ աշակերտի միտքը պէտք է ցրուէ, որովհետեւ իւրաքանչիւր բառ միւսից բոլորովին աննըման կրթութեան առիթ պիտի դառնայ: Լեզուի միութիւն են կազմում զոր օր. հետեւալ բառերը՝ բայս, բուօ-ական, բուսեղէն, բուս-արեր, տն-բոյս, լնդա-բոյս, կենդանա-բոյս, գուցէ և բոյծ. կամ մի ուրիշ տեսակէտի պատճառով՝ բոյս, յոյս, լոյս, կոյս (այ երկրարբառ): Կամ դարձեալ մի ուրիշ՝ դիտմամբ՝ բոյս, տունկ, —խոտ, բանջար, ծառ, անտառ (նոյնանիշ և նոյն ուռը արտացայտող բառեր): Ծառ և պտուղ—ծնող և զաւակ (նոյնանիշ ասացուածներ կամ փոխաքերութիւններ): — Ուրեմն միութեան սկզբան հետ՝ այն սկզբունքը ևս պէտք է պահպանուի, թէ մի բառի իմաստը հասկացնելու համար կարեոր բացատրութիւնները՝ պէտք է մատուցանուին բանաւոր վարժութեանց ժամանակ և ու նէ գրութեան ընթացքին: առարկայի ծանօթութիւնը և լեզուաբանական կրթութիւնը՝ իրար հետ չը պէտք է խառնուին: Լեզուի դասերի ժամանակ աւելի լեզուի ձեւերը պէտք է զբաղեցնեն աշակերտին, քան բովանդակութիւնը. բայց այս վերջինը արդէն ծանօն պէտք է լինի, նախքան գրութեան վարժութեան ձեւնարկելու:

Մնաց այժմ ցայց տալու, թէ այս կերպի գրութեան ուսումը ի՞նչպէս հիմք է դառնում գիտակցական ընթերցանութեան համար, այն ընթերցանութեան՝ որ աւելի վերծանութիւն պիտի կոչուի:

Ընթերցանութիւն: Մեզանում ընթերցանութիւնը միայն

անուամբ կայ, մեր աշակերտները լաւ չեն կարգում. մի դարման պէտք է գտնել, որ այս տխուր երևոյթը վերանայ. և հէնդ սկզբից հիմքը լաւ պէտք է դրուի:

Ընթերցանութեան արուեստը երկու իրարից տարբեր գործ է պահանջում. նախ պէտք է աչքով քաղած գիրը հնչում դարձնել, տեսածը շրթունքով թարգմանել—այս արտաքին գործ է. և երկրորդ՝ հասկանալ և իմանալ գրի զօրութիւնը, բովանդակութիւնը—այս էլ ներքին գործ է: Ուրեմն կարդ տցողը այնքան վարժ պէտք է լինի, որ արդէն աչքով ըստոնէ ձայնը, աչքով լսէ բառի վանկերը, յատուկ հնչիւնները և շեշտը, վերջապէս նա պէտք է աչքի ազդամոմք լսէ բառերի համաձայնութեան և ամբողջ նախադասութեան սեպհական ձայնական ելեւէջները: Եւ այս հմտութիւնը հարկաւոր է ոչ թէ նորա համար, որ նա միայն շրթունքներով կարդայ և բարբարէ, այլ որ հասկանայ գիրը, իմանայ թէ ուրիշները մեզ ինչ են տում տպագրութեան կամ ձեռագրի միջնորդութեամբ:

Թէ ընթերցանութիւնը նախ և առաջ լսողութեան և ձայնական խօսողութեան հետ է կապուած, այս մենք փորձով գիտենք: Մինչև անգամ երբ որ լուռ ենք կարդում, այսինքն՝ առանց ձայն հանելու և առանց շրթունքները շարժելու, այնու ամենայնիւ բառեր և նախադասութիւններ մեր մտածութեան մէջ մարմնացնում ենք իրանց սեպհական շեշտով և ելեւէջով: Իսկ մանուկը՝ երբեմն ևս հասակաւորը՝ երբ որ սկսում է մըտածել, հետը կամացուկ շրթունքները շարժում և կիսաձայն խօսում է: Մի խօսքով աշակերտը միայն այն է հասկանում, ինչ որ բարձրածայն կամ գէթ շրթանց կամացուկ շատ կով կարդում է. նա հետզետէ միայն սովորում է այն կէտին հատնել, որ այն ամենայն, ինչ որ նորա տչքը տեսնում է որպէս սոսկ գիր ու նշան, նորա մտքի մէջ որոշվում է որպէս իմաստալից բառ: Հիմա գժուար չէ հասկանալ, թէ մի ուսում, որ բանաւոր վարժութիւններով գրելու առաջնորդութիւն է տալիս և ապա կնքվում է ընթերցանութեամբ, աւելի արագ արագ և հաստատում կերպով կը համնի այնպիսի հետևանաց, ուր ընթերցանութիւնը ոչ թէ սոսկ ձայնական կարդ ալ և բար-

բաջումն է դառնում, այլ զիտակցական վերծանութիւն։

Որպէս զի գրի զօրութիւնը իմացուի՝ նախ և առաջ հարկաւոր է, որ բառի ներքին գործուածքը և կազմութիւնը յայտնի լինի. իսկ մենք գիտենք, որ վերը նկարագրած բանաւոր և գրաւոր վարժութեանց նպատակի կէտը՝ այդ էր, Այդ է նմանապէս ընթերցանութեան բուն խարիսխը։ Կարդալու ժամանակ մանուկը պէտք է արգէն բազմիցս արտասանած բառը՝ գրաւոր նշանների մէջ ստուգիւ ճանաչէ, թէ նորա արտաքին ձեռվ և թէ նորա ներքին իմաստով։ Որպէս զի իւր կարդացածից ոչ միայն աննշանակ ձայներ քաղէ, այլ այդ ձայներից նշանական բառեր ըմբռնէ, նա պէտք է ձայների մէջ մի կապտակցած իմաստ գտնէ, պէտք է մարմնին՝ հոգի տայ, Բառին այդպիսի դրոշմ է տալիս իւր ներքին շեշտը, որ մեր հոգու մէջ ազդում է, և որով գատարկ հնչիւնները՝ մի ներդաշնակ կազմութիւն են առնում։ Իսկ այնուհետեւ հանդիսանում են իրրե իմաստ և բոլանդակութիւն արտայայտող բառ։ Մանուկը ամենե ին չի կարողանայ զսր օր. «Հայր, բառը այդպէս ըմբռնել, եթէ իւր ընկերներից նոյնը լսում է աղաւաղեալ ձայնով կամ ինքը կարդում է ձգձգելով և ասում է «Հաայիր»։ Ապա ուրեմն վաղօրօք հաստատուած պէտք է լինի ճիշտ արտասանութեան վարժութիւնը, որպէս զի այդ տեսակ անտեղութիւնները արմատով վերանան։ Եթէ պէտք է կարդացուի «սպառսպուռ» բառը, նա կիսահայեաց ակնարկ ձգելով անմիջապէս կը հասկանայ, թէ այդ բառը կրկնաւոր բառ է, ուրեմն բաւական է, որ առաջին կէսը կարդայ (սպառ), իսկ միւս կէսը առանց դժուարանալու ծանօթ եղածի պէս կը լրացնէ. կամ՝ թէ «արհամարհանք» բառը այսպէս կը լուծէ ըստ բառակազմութեան՝ արհ-ա-մարհ-անք և բառական կը համարէ ուշադրութեամբ կարդալ միայն առաջին մասը, զիտեհնալով, որ երկրորդ մասը յայտնի յօդակապ է, երկրորդ մասը կրկնաւոր ձայն է, և վերջին մասը ծանօթ վերջադաս մասնիկ է. իսկ ան-տօն-ելի բառի մէջ իսկոյն կը որոշէ իրան յայտնի նախադաս և վերջադաս մասնիկնեցը և կը կապէ միայն առ վանկը։

Քանի որ տպագրութիւնը չէր հնարած, ընթերցանութիւնը

կախում՝ պիտի ունենար գրութիւնից, այսինքն Գյելը՝ պէտք է սովորեցնէին ընթերցանութիւնը, և ոչ թէ ընդհակառակ. այդ գիւտից յետոյ սովորութիւն դարձաւ մանկան ձեռքին տալ մի տպագրած գիրք, նորա ուսումը սկսելով անմիջապէս հեգել տալուց, գիր կապելուց, այսինքն Էտալուց: Նա ուրեմն գլուցական աւազին օրուանից սկսած՝ մտնում էր մի անձանօթաշխարհ, որ սե գծերով և նշաններով մի անառիկ բերդ պիտի լինէր նորա համար: Նա պէտք է ջանար բարձրանալ այդ բերդը: Բայց թէ որպիսի աղէխորով և սրտաճմիկ ձայներով էր սկսում իւր գործը, և որքան տարի էր տեսում՝ մինչեւ որ վախճանին էր համար: այդ արդէն լաւ նկարագրել են մեր նորագոյն վիպասանները: Եւ մինչեւ այսօր իսկ, շատ անգամ մանուկները ընթերցանութեան վարժութեանց մէջ՝ գիր կապելուց վեր չեն գնում, գրքերից ոչինչ իմաստ չեն քաղում, ուսումնաբանից միայն տաղտկութիւն և վհատութիւն դուրս բերելով: Այսպէս է սկսուել այն վատ սովորութիւնը, որ ընթերցանութիւնը բաժանել են երկու աստիճանի՝ նախ սովորեցնում են մեքենական ընթերցանութիւն կամ արտաքին գործ, ապա իմաստասիրական ընթերցանութիւն կամ ներքին լուսաւորութիւն. և ով գիտէ, արդեօք այս վերջինը կատարվում է երբ և իցէ:—Այս ամէնը պէտք է փոխուի. մանուկը պէտք է վարժուի և սովորէ գրի մէջ ճանայել ձայնական լեզուն, նա ուրեմն պէտք է նախ իւր խօսածը յօգերի բաժանէ և գրէ, ապա իւր գրածը կտրդայ. և այսպէս նորա ընթերցանութիւնը կը լինի ոչ թէ մի անձանօթ նոր ոկրնաւորութիւն, այլ կաճէ իբրև հետեւանք, այսինքն նա կը լինի Գյանաբարձութեանց պարունակութեան: Իսկ ընթերցանութեան հեշտ և դժուար ասոինձանները միայն այն կը լինի, որ մանուկը այդ ճանապարհով կը վարժապէս պարզ նախադասութիւններ: Ուրեմն սա մի չնչին խնդիր չէ, որ շատ անգամ հարցնում են, արդեօք մենք պէտք է սովորեցնենք Գյել-կարդալ, թէ կարդալ-գրել:

Այս բոլոր ասածներից այն է հետեւում, թէ ընթերցանու-

թիւնը այնպէս պէտք է ուսուցանուի, որ աշակերտը գրի մէջ վերսախն ճանաչէ ձայնական խօսուն լեզուն. Եւ եթէ նա սովորել է իւր արտասանած և հասկացած բառերը իւր ձեռքով գրել, նա ուրեմն ինքը ստեղծումէ աչքի համար երեւելի լեզու և իւրաքանչիւր սև գիծ նշանակում է խորհրդով և իմաստով։ Այժմ այդ տեսանելի լեզուն և գծերը օտար բան չեն նորա համար, նոցա մէջ չի գտնում՝ ոչինչ, որ անձանօթ լինի. Նոցա ամէն մէկ ձեւի, ամէն մէկ գծի, ամէն մէկ կէտի նշանակութիւնն ու զօրութիւնը լաւ գիտէ, որովհետեւ նա միայն այն է ձեւացուցանում ինչ որ իւր ականջով և շրթունքներով ճշդիւ որոշել է։ Եւ ընդհակառակ, եթէ այժմ նա ուզենայ գրածը կարդալ, նա կրկին կը ճանաչէ գրերի մէջ առաջուայ ելեւ ջրը, շեշտագրութիւնը, ձայների յօդաւոր կապակցութիւնը, այսինքն նշանի իմաստը։ Ինչ որ կարդայ, նո կը կարդայ այն առողջանութեամբ, ինչպէս որ խօսելու ժամանակ իւր ականջն է լսել և բերանը արտասանել։ Ուրեմն սովորական ձանձրալի, անիմաստ, անհոգի, միաձայն տգեղ գիր կապելու տեղի չի ունենայ. Հիմնապէս գորա առաջն է առնուած։ Եթէ իւր ձեռքով պատկերացուցան նշանների զօրութիւնը հասկանում է, եթէ միշտ միայն այն սովոր է պատկերացնել, ինչ որ կանխաւ որոշել է, յօդերի է բաշխել և ըստ ամենայնի բան նշանակելով է գրել, այդ կը լինի և այն յաջող քայլը, որ սկսէ հասկանալ և ուզիչն պատկերացուցածը, այսինքն ուղղակի կարդալ այն, ինչ որ ինքը չէ գրել։

Բայց գրքի կարդալը յատուկ դժուարութիւններ ունի։ Նախ և առաջ ձեռագիրը և տպագրած գիրը բաւական աննմանութիւններ ունին։ Ուստի և աշակերտը նոր չպէտք է սովորէ այս տարբերութիւնները, այլ իսկզբան անոտի ինչ որ իւր ձեռքով գրել է, այն ամէնը միշտ պէտք է տեսած լինի տպագրած նշաններով ևս (շարժական տառերով)։ Երկրորդ՝ գրելու ժամանակ ինքն է ձեւացնում ամբողջ բառը հետզետէ վանկերից, իսկ տպագրածի մէջ բառը արդէն ամբողջացած է տեսնում, որը որ իւր մտքում նախ պէտք է վերլուծէ, ապա թէ կարողանայ ճշդիւ կարդալ։ Լաւ կարդալու համար, պէտք է լաւ սո-

վորութիւններ ևս հաստատուած լինին։ Յայտնի է, թէ աշակերտները ինչպէս են դժուարանում երկայն բառեր ճշգիւ կարդալ, նոքա կամ մէջ տեղից վանկը կուլ են տալիս, կամ հնչիւնները տեղափոխում են և ուրիշ տեսակ աղաւազութիւններ և աղճատումներ են առաջացնում։ Փոխանակ կարդալու «անգործութիւն», նոքա առում՝ են, անգործութիւն, անգործութիւն, անգործութիւն և այլն։ Որպէս զի աշակերտը չը դըժուարանայ այդպիսի բառեր կարդալ, նա պէտք է այդ բարձր գործը հասունէ բաժանէ, նա պէտք է գտնէ նախ ձայնաւորները՝ ա, ո, ու, իւ և լաւ միտ գնէ, թէ ամբողջի մէջ յորս անդամ՝ կայ, և այնուշետեւ լուր յայնով հասուած հասուած կապէ վանկերը այսպէս՝ ա, ան, ո, գո, գոր—անգոր, ու, ծու—անգործու։ իւ, թիւ, թիւն—անգործութիւն, իսկ յետոյ բարձրայն ասէ գտած բառը ամբողջովին և շեշտով։ Այսպէս էլ եթէ նա կարդում է ամբողջ նախադասութիւն, նա պէտք է ըմբռնէ հարցական նշանի, բութի, ստորակէտի, վերջակէտի և ուրիշ նշանների խորհուրդը և իւր լնթերցման աւեսդանութեամբ ցոյց տայ, թէ արուհութեան նշանները սխալ չէ ըմբռնել։ Նա պէտք է իրան հաշիւ տայ, թէ ինչպէս կարդայ այ, պ, իւ, ո, ե (այս, տեսայ, —նոյ, քոյ, նոյն, — թիւ, իւր,—ողջ, առողջ, — եկեղեցի) կամ ինչպէս կարդայ այն լծորդ բաղաձայները, որոնց գրութիւնը որ երբեմն տարբերվում է արտասանութիւնից (ինչպէս որ գրութեան ժամանակ նա նկատում էր, թէ երբեմն արտասանած չ, թ. . . գրվում է ջ, դ. . . , այնպէս էլ այժմ առանձին պէտք է նկատէ, թէ տպագրած ջ, դ. . . արտասանվում է ջ, թ. . .)։ Նա պէտք է երբեմն բաժանուած տպածը անբաժան կարդայ (որն որ—որ նոր, գնում է—գնումէ, կ'ասէ—«կասէ»)։ Նա պէտք է մի լլ միայն-ից յետոյ գուշակէ մի Այլ և, Թէակեդ-ից յետոյ՝ Սակայն, Ենէ-ից յետոյ՝ Հաղոս և այլն։ Մի խօսքով ամենայն տարակուսելի հանգամանք՝ պէտք է աշխատէ անձամբ լուծել լուռ ձայնիւ պատրաստութեան ժամանակ, և բարձրաձայն ասէ՝ միայն պատրաստ արդիւնքը. իսկ երբ որ գժուարանայ լուծել, հարցնէ ուսուցչից լուծումը, բայց երբ բէք չը շտապէ և թերի չը հանդիսանայ։

Պէտք է գիտենալ, որ ընթերցանութեան ժամանակ ամէնից աւելի դժուարութիւն է պատճառում ը կիսաձայնը, որը որ մեծ մասով լուելեայն պէտք է իմացուի, որովհետեւ ներգործութեամբ չի նշանակվում։ Մանուկը ըստ կարծէ, թէ զոր օր տրտմել, բառը միտվանկ է, միայն այն պատճառով, որ բառի մէջ տեսնում է մի ձայնաւոր։ Օգտաւէտ է, որ այսպիսի բառերը սկզբներում աստղանիշ լինին, բայց և այնպէս վարժութիւնը շատ կրթութիւններից յետոյ ձեռք կը բերուի։

Արդ ի մի ամփոփենք մայրենի լեզուի այն հմտութիւնները, որ ուսման առաջին աարուայ ընթացքում աշակերար պէտք է ձեռք բերէր և որ պէտք է առաջին հիմք համարուի հետեւեալ տարիների ուսման շարունակ ընդարձակութեան համար։

Ա. ԲԱՆԱԿՈՐ ՎԱՐԺՈՒԹԻՒՆ.

- Աշակերար վարժութիւն է ստանում կապակցեալ խօսքը հասկանալ և անձամբ ևս արտայայտել բանաւոր լեզուով։
- Նա վարժվում է յօդաւոր շեշտեալ շնորհալի առողջանութեամբ բարձրաձայն խօսել։
- Նա կարող է յօդուածոյ խօսքը լուծել նախադասութիւնների, նախադասութիւնը բառերի, բառերը վանկերի, վանկերը հնչեանների։
- Նա վանկի մէջ որոշում է ձայնաւորը (երկար ձայնը), նախադաս և վերջադաս բաղադայները։
- Նա որոշում է ը կիսաձայնը կամ սուղ ձայնաւորը միւսներից։
- Նորա ականջը և բերանը վարժուած է նմանաձայն հնչեանների զանազանութիւնները իրարից որոշելու (նուրբ, միջին, թաւ),
- Նա որոշում է գլխաւոր վանկը երկրորդականներից (մասնիկներից, ածանցներից, հոլվական և խոնարհման հանգերից), և գիտէ թէ շեշտը փոխադրուելով մեծ մասամբ վերջին վանկի վերայ է անցնում։
- Նա որոշում է բառակազմութեան վանկերը արտասանութեան վանկերից—ներքին ազդմամբ, և ոչ եթէ այդ անուններով։ Նա որոշում է արմատը նախադաս և վերջադաս մասնիկներից, զոր օր. արհամարհանք, բառը ըստ հարկին կը լուծէ և այսպէս՝ արհամարհանք։ Եւ այսպէս՝ արհամարհանք,
- Նա գիտէ և որոշում է փոփոխող մասանց բանի հանգամանքները՝ եղանի և յոգնակի, դէմք, ժամանակ, եղանակ, ներգործական և կրաւորական ձևեր։

10. Վերլուծական հարցմանց վարժութիւններով (հոլովական հարցումներով թէ ո՞ք են որպիսութիւնը, աեղական ժամանակական և ուրիշ պարագաները) և աւելի զգացման միջնորդութեամբ՝ սովորել ե իմանալ նախադասութեան մասանց փոխադարձ յարաբերութիւնները.
11. Նա որոշում է պատմական (հաստատական և ժխտական), հրամայական (ողբական) և հարցական խօսքը յօդուածոյ բանի մէջ:

Բ. ԳՐՈՒԹԻՒՆ.

1. Նա կարող է իւրաքանչիւր բառ ըստ հնչման գրել՝ ինչպէս որ լեզուի սովորութիւն է դարձել՝ նոյնպէս ևս փղըթիկ նախադասութիւններ՝ եթէ հնչման դժուարութիւններ չեն ներկայացնում՝ նա գրի է առնում իւր գիտեցած կանոններով՝ բայց ոչ բոլորովին առանց օգնութեան ուսուցչի կողմից.
2. Նորան ծանօթ են տրոհութեան նշանները՝ վերջակէտ, ստորակէտ, բուժ, միջակէտ, հարցական, երկար, շեշտ, չակերտ, և բաւականացափ գիտէ դոցա գործածութիւնը.
3. Նա գիտէ, թէ խօսքի սկզբին և ամենայն վերջակէտից յետոյ գըլ խատառ պէտք է նշանակուի, թէ կան մի քանի բառեր, որոնք միշտ այդպիսի գրով են գրվում:
4. Նա արդէն սկսել է բառակազմութեան կանոնի համեմատ գրել և մի գաղափար ունի կորուսման և փոփոխման մասին. եթէ զոր օր. գրում է «աղեհամ» և «աղէկոտոր» բառերը, նախ իրան հաշիւ է տալիս, թէնոցանից ո՞րը ծագում է «աղ» բառից և ո՞րը «աղիք» բառից, որպէս զի ե-ի և է-ի ուղղագրութիւնը չը շփոթէ. կամ եթէ մի անգամ գրել է «զննել» բառը՝ այնուհետև չի գրի զննին, այլ զգացած կանոնի համեմատ՝ զնին (զննել):
5. Նա գիտէ, թէ արտասանած «որ ն-որ» պէտք է գրուի «որն որ» և թէ երբեմն անբաժան արտասանածը՝ բաժանուած պէտք է գրուի (կու գայ, գնում է, կ'ասէ).
6. Նա գիտէ, թէ ը կիսաձայնը գրելիս երբեմն չի նշանակվում, և թէ յ և նշանները զանազան գործածութիւն ունին. Այս տարբեր գրութեանց համար մի մի յարացոյց բառեր մտքի մէջ ապաւորած ունի, որոնց յիշողութեամբ առաջնորդվում է, երբ որ միասեռ բառեր է գրում. Նա զոր օր. ասում է, թէ «յորդոր» գրվում է որպէս «Յիսուս», — «Հաստ» չի գրվում որպէս «Յիսուս»:

Գ. ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ.

1. Արդէն գրութեան վարժութեանց ժամանակ նա սովորութիւն է արել

- իւր ձեռքով ամէն մի գրածը՝ անմիջապէս կարդալ և այդպէս կարդալով նկատել ընթերցանութեան կանոնները.
2. Նա գիտէ թէ ինչպէս պէտք է կազմէ վանկը՝ նախ ձայնաւորը՝ ապա բաղաձայները գտնելով. գիտէ թէ նախընթաց բառի վերջին բաղաձայնը արտասանվում է հետեւեալ բառի սկզբնական ձայնաւորի հետ ի միասին (որն որ), թէ երբեմն բաժանուածը միասին պէտք է արտասանուի (կու գայ, գնում է, կ'ասէ), գիտէ թէ ը կիսաձայնը շատ անգամ զօրութեամբ պէտք է իմացուի և թէ յ և և միւս կիսաձայները կամ այլեայլ երկրարրառները՝ քանի տեսակ են կարդացվում։ Նա ճանաչում է նմանապէս տարակուսելի բաղաձայները.
3. Նա սովորութիւն է արել բարձրաձայն կարդալ միայն այն, ինչ որ կանխաւ լուռ պատրաստելով է գտել. Գիտէ տրոհութեան նշանների զօրութիւնը և ըստ այնմ ելևէջներ է տալիս իւր արտասանութեան.
4. Նա նորանով է արագացնում լուռ պատրաստութիւնը, որ աւելի մոտադրութեամբ քննում է արմատական վանկը, իսկ մասնիկները արդէն հարեւանցի հայեացքով ճանաչում և շուտ կարդում է.
- Բանաւոր վարժութեան, գրութեան և ընթերցանութեան արդիւնքը պէտք է լինի այսքան. իսկ թէ աշակերտաները ինչ եղանակով կը հասնեն այդ կէտին, ուսուցչին է թողնվում, որ ինքը որոշէ իւր անելիքը. Մենք նկարագրեցինք այդպիսի եղանակներից մէկը։

(Կարո-նաևէլէ):

Ա. Ա.